



ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Խոհագրություն

Թեմա Ռուբեն Սևակ
Ֆակուլտետ Օտար լեզուներ
Բաժին Անգլերեն լեզու և գրականություն
Կուրս IV
Ուսանողուհի Գոհար Ամալյան

Երևան 2018

Ռուբեն Սևակ



Նա մեկն էր XX դարասկզբի արևմտահայ բանաստեղծության մեծերից: Նա մեկն էր նրանցից, ովքեր խորապես ապրեցին համիդյան բռնապետության կողմից արևմտահայության կյանքում ստեղծված մղձավանջը և ըմբոստացան՝ տրտմության ու տառապանքի, հույսի ու հավատի երգերով, իսկ բռնապետության վերացումից հետո մի պահ նույնիսկ հավատացին, թե ամեն ինչ մնաց հետևում, ու երգեցին Մարդուն, Կյանքի երգը: Խաբկանք էր. գալու էր 1915 թ., սպանվելու էր Մարդը, Կյանքը, Երգը:

Արևմտահայ նշանավոր գրող, բանաստեղծ, արձակագիր և մասնագիտությամբ բժիշկ Ռուբեն Սևակը (Ռուբեն Չիլինկարյանը) ծնվել է 1885թ. փետրվարի 15-ին Կ.Պոլսին մերձակա Միլիվրի գյուղաքաղաքում: Մովորել է ծննդավայրի Ասքանազյան նախակրթարանում, Պարտիզակի ամերիկյան գիշերօթիկ վարժարանում, ապա տեղափոխվել Կոստանդնուպոլսի հայտնի Պերպերյան վարժարան: 1905 թ. փայտուց ցուցանիշներով ավարտելով վարժարանը, մեկնում է Շվեյցարիա և ընդունվում Լոզանի բժշկական համալսարան: 1911 թ. Ռուբեն Սևակը, որպես օգնական բժիշկ, սկսում է իր աշխատանքային գործունեությունը Լոզանում: Մի օր Լոզանի օրիորդաց վարժարանի մոտով անցնելիս պատահաբար տեսնում է այդ վարժարանի սան, պրուսական զինվորական ազդեցիկ ընտանիքից սերած գերմանուհի Յաննի Ապելին (Հելեն ֆոն Պրասա) և հրապուրվում նրա գեղեցկությամբ: Սկսվում է աննախադեպ բուռն սիրո մի պատմություն, որը, չնայած Յաննիի բարձրաշխարհիկ ծնողների խիստ հակառակությանը, ի վերջո ավարտվում է հաղթանակով՝ ամուսնությամբ: Ահա երջանիկ մի ընտանիք, արդեն փեսայի նկատմամբ գիտակից բարեհաճություն, ապա երկու հրաշալի երեխաներ՝ Լևոնը և Շամիրամը, աշխատանքում հաջողությունների հեռանկարներ:

Սևակյն... Ռուբենը հայ բանաստեղծ էր: Արևմտահայության ճակատագրի կրողը: Նրանից հեռու՝ մշտապես նրա հետ՝ երկրից ու Պուլսից ստացած լուրերով, ընկերների՝ ծնողների հետ նամակներով, Պուլսի ու այլ վայրերի հայ մամուլի ընթերցանությամբ ու այնտեղ տպագրվող իր բանաստեղծություններով, արձակ էջերով:

Բանաստեղծ Ռուբեն Սևակի ստեղծագործությունները ինքնատիպ գեղարվեստական մտածողությամբ ու ոճով առանձնանում են արևմտահայ գրականության մեջ:

Ուսման տարիներին Ռուբեն Սևակը գործերը տպագրել է արևմտահայ «Բյուզանդիոն», «Արևելյան մամուլ», «Բազմավեպ», «Ամենուն տարեցույց» պարբերականներում: 1905 թ-ին «Մասիս» հանդեսում տպագրվել է Սևակի առաջին՝ «Բաժանման խոսքեր» բանաստեղծությունը, 1907 թ-ին՝ առաջին արձակ գործը՝ «Տարի մը վերջ» պատմվածքը, 1910 թ-ին՝ «Կարմիր գիրք» ժողովածուն, որը պարունակում է երեք քնարական պոեմ՝ իրենց բովանդակային ու ժանրային մատնանշումներով. «Ջարդի խենթը (բեմական մենախոսություն)», «Թրքուհին (գեղջուկ եղերերգ)», «Մարդերգություն» (երեք բաժնով՝ «Գյուղական եկեղեցիին մեջ - ծնունդը», «Գյուղական ճամբուն վրա - կյանքը», «Գյուղական գերեզմանատան մեջ - մահը»):

«Ջարդի խենթը» և «Թրքուհին» բաժանված են տասական մասի, «Մարդերգության» երեք բաժինները՝ տասնմեկական, վերջին երկու պոեմի մասերը չորսական քառատող տներ ունեն, միապաղաղությունից խուսափելու համար մի դեպքում քառատող տները անջատված են և ավարտուն, երկրորդում՝ անանջատ, շարունակվող՝ ըստ նախադասության ավարտի: «Ջարդի խենթի» տասն առանձին մասերը, տողերը, որպես խենթի մենախոսություն, հավասար չեն, այլ ջարդի ահավոր պատկերներից թելադրված տարաչափ պոռթկումներ:

«Մարդերգություն» պոեմը եռամաս է՝ ծնունդ, կյանք, մահ: Պոեմում Սևակը խոսում է մարդկային գոյի մասին, բանաստեղծական խոսքի երևակայական թռիչքի միջոցով անցավորը կապում է անանցին, անհնարինը դարձնում հնարավոր:

Ըստ Սևակի՝ կյանքն անբաժանելի է մահից և իր սկիզբ, ընթացք, վախճան հաջորդականությամբ անմահության կրողն է: «Մարդերգություն» պոեմում նա դառն հեզնանքով նախ ֆրիկյան հարցադրումն է ասես կրկնում, թե ինչու է աշխարհն այսպես ստեղծվել, անհավասարությունը սկսվում է արդեն գյուղական եկեղեցում երկու երեխաների. մեկը՝ հարուստի, մյուսը՝ աղքատի կնքելու արարողությունից. մեկը՝ բեհեզով, մետաքսյա շորերով ու ժանյակներով, մյուսը՝ ձորձերով, ճակատագրերը կանխորոշված են՝

«Մեկը Տեր արդեն, մյուսը՝ գրաստ», բայց սևակյան «զանգատը» դրսևորում է նաև որոշակի մաղձ, զայրույթ դեպի «հղուհացած. ճոխ մեծերը երկրին».

Ծնրադրած դողդոջ, աչքերս ձեռքիս,
Կուրծքիս տակ զսպել կուզեի հոգիս:

Բսկ հոգին, որպես հուզումի թելադրանք, մի պահ նրան մտովի կարող է տեսլային պատկերներ ցուցանել՝ «բյուր կախադաններ անգութ մեծերու», հեղափոխական հրդեհների մեջ՝

Ստրուկներու կուռ, բարբարոս գունդեր,
Որ տաճար, աստված, կուռք, իշխան ու տեր
Տապալելով վար կերթային հեռու
Հավասարության սերմը ցանելու,
Ու լայն բաշխելու Արդարություն, Հաց...

Սա տեսիլք է, բայց ահա իրականության ճշմարիտ մի պատկեր է «Կարմիր դրոշակը» բանաստեղծությունը՝ ստեղծված Եվրոպայում բանվորական զանգվածների հզոր մի ցույցի տպավորությամբ: Անոթիների, անգործների զանգվածը, կարմիր դրոշակն առաջ պարզած, ի զեն, ի պայքար գոռալով անցնում է փողոցով («Արդարության կը դիմեին»): Սկզբնապես բանաստեղծը կարծես անհույս է՝ «Արդարության, որ երբեք չի պիտի գար», բայց բանաստեղծությունն ավարտում է այլ համոզումով՝ ընդգծելով պայքարի հենց այդ տեսակը՝

Բայց կերթային անոնք, ի զեն, ի պայքար
Արդարության կը դիմեին խոնջ, տկար,
Արդարության, որ այս կերպով պիտի գար:

Միննույն ժամանակ Սևակը դեմ էր զենքով արյունալի պայքարին: Հենց նույն տարում (1909) գրած «Այս դանակը» պոեմում բանաստեղծը, պատկերելով մի խեղճ բանվորի, որ ընդունակ չէ «դանակով» ճարելու իր հացը, դիմում է հենց այդ դանակին, որ կարող էր «արյան վրա հիմնել Օրենքը սպազա».

Բայց կը սպասե որ խաղաղությամբ գա,
Արդարությամբ գա, գա տարվետարի,
Զրկված մարդկության երազը բարի...

Մի դեպքում՝ զենքով, միանգամից, ասել է հեղափոխությամբ, մյուս դեպքում՝ բարեշրջությամբ, Էվոլյուցիայով, խաղաղությամբ, «տարվետարի»: Ամեն դեպքում՝ խոր համակրանք՝ խեղճերի, աղքատների, տառապողների նկատմամբ և անհաշտ վերաբերմունք ու կրքոտ բողոք դրամատիքական նոր աշխարհի (ուր «սերը հաշիվ է, կրոնքը՝ դրամ», «Մի կրոնք կա՝ Կեղծիք, մի աստված՝ Դրամ...») անարդարությունների դեմ:

Վրիժառու հերոսի կերպարը հաճախ է երևում Սևակի ստեղծագործության մեջ, բոլոր դեպքերում մնալով, սակայն, ռոմանտիկական գաղափարատիպի շրջանակներում: Այդ հերոսը հեղինակի ձգտումների կրողն է, որ մեծ մասամբ նույնանում է նրա էության հետ, երբեմն էլ դառնում սիմվոլ նման դեպքերի համար հատկանշական բոլոր պայմանականություններով հանդերձ: Հերոսը բարձրանում է

շրջապատից, որոշ իմաստով հակադրվում այդ շրջապատին՝ կրելով բացառիկ անհատի հատկանիշներ: Կարելի է հիշատակել «Կարմիր գրքում» գետեղված «Թրքուհին», «Ջան» անավարտ պոեմը:

Բանաստեղծը միաժամանակ իր ժողովրդի պատմական բախտի փիլիսոփան է: Ի՞նչ է ժողովուրդը, որտեղի՞ց է եկել նա, ո՞ր է գնում, ո՞րն է եղել նրա գոյության կովանը դարավոր մաքառումների ճանապարհին,- ահա խոհեր, որ պաշարում են ամեն մի ստեղծագործողի, մանավանդ արհավիրքի օրերին, երբ անողորքությամբ դրվում է ժողովրդի գոյության կամ չգոյության հարցը:

Սևակը գեղարվեստական մեծ ուժով է արտահայտել սոցիալական անարդարության, բողոքի և ընդվզման գաղափարը «Դրամին աղոթքը» (1907 թ.), «Կարմիր դրոշակը» (1909 թ.) բանաստեղծություններում և «Այս դանակը» (1909 թ.), «Փողոց ավլողը» (1911 թ.) պոեմներում, որոնք արևմտահայ պոեզիայում այս թեմայով գրված լավագույն ու ինքնատիպ գործերից են:

«Թրուպադորները» (1910 թ.) պոեմում Սևակը բացահայտել է նյութապաշտ հասարակության խոցերը, իդեալի և իրական կյանքի ողբերգականության հակադրությունը՝ փայփայելով «գրկված մարդկության բարի երագը» ազատ ու արդար աշխարհի մասին: Պոեմում տրուբադուրը՝ միջնադարյան Պրովանսի (Ֆրանսիա) երգիչը, գեղեցիկի, ազատ ստեղծագործողի, ազնիվ ինքնագոհաբերման ու նվիրումի կրողն է: Իր տրտունջ-բողոքը հաճախ և հատկապես «նոր մարդկության նոր թրուպաստուրներին»՝ իրօրյա տրուբադուրների մասին «Թրուպաստուրները» հրաշալի քերթվածում՝ (ձոնված «բանաստեղծ ընկերներուս») հասնում է խոր ընդհանրացման, մարդկային գեղեցիկ ու վսեմ հատկանիշների կորուստը զգում է ցավով ու տազնապով:

Այս ինչ դարերու հասեր ենք, Աստված,
Փշրեցին ինչ որ կար վսեմ կերտված,
Թե դեռ սի՛րտ ունիք, թաղելու տարեք.
Ոսկիին նենգ ձայնն է ամենուրեք...
...- Վախ, արծաթն Արվեստն հանեց կախադան...

Հայտնի չէ, թե ինչ շարքի կամ գրքի ինչ խորագրի տակ Սևակը կներառեր բնության, կյանքի գաղտնիքների, կյանքի ու մահվան առեղծվածի մասին իր գեղեցիկ բանաստեղծությունները («Հոգիս», «Մինակ մարդը», «Երթալ», «Լեման», «Կարապները», «Վերջին արքան», «Գացող մարդը», «Գիշերն իջավ» և այլն): Ժամանակի ու հետագա տարիների մամուլում հրատարակված բանաստեղծությունները, ինչպես նաև 1980-90-ականներին լույս տեսած Սևակի ամբողջական երկերի ժողովածուներում տեղ գտած անտիպները իրենց բովանդակությամբ, անշուշտ մոտավոր, բայց կարող են մեզ հուշել, թե որ գործերը կարող էին մեկտեղվել նրա ծրագրած գրքերի տարբեր խորագրերի տակ: «Միրո գիրքը», հասկանալի է, մեկտեղելու էր Սևակի սիրո երգերը, որ զգալի տեղ ունեն նրա պոեզիայում: Դրանք ապրված զգացումի արտահայտություններ են, սիրո

ապրումի տարբեր պահերի ծնված խոհեր, խոստովանություններ, տազնապներ, հոգու ճախրանքներ:

Իր սերնդի բանաստեղծների մեջ Սևակի սիրո երգը, թերևս, ամենահարուստն է: Այդ երգերի քնարական հերոսը, որ առավելապես ինքը՝ բանաստեղծն է, ավելի քան ցայտուն է մարմնավորված, նա սիրո հրդեհով բռնկված մի երիտասարդ է, որ անցնում է սիրո պատմության բոլոր փուլերով, նա անմիջական կրողն է սիրո ապրումի բոլոր պահերի՝ առաջին հանդիպման տենչ, նամակի պատասխանի սպասում, հանդիպման սպասում ու հրճվանք, սիրո վայելք ու հոգեկան դրամա, բաժանման ցավ ու կորստի մորմոք, սիրո իմաստավորման խոհ («Երգ երգոց», 1908 թ., «Գին՝ վ սեր», 1908 թ., «Եկո՛ւր», 1911 թ., «Բնչո՛ւ», 1911 թ., «Սիրո և մահվան երգ», 1912 թ., «Սերը», «Առաջին մեղքը», «Սրինգ», «Սերո՛վ, սերո՛վ...», «Պիտի սպասե՛մ...»): Նրա սիրո երգերի հերոսը հոգեպես հարուստ երիտասարդ է՝ սիրող ու տառապող, երջանիկ ու ապաբախտ, թախծող ու հրճվալից, իրապաշտ ու երազող միաժամանակ: Ռեալիստի համոզականությամբ սիրո երգերում Սևակը, անշուշտ, ռոմանտիկ է: Սերը բանաստեղծի համար երազ է, որին պիտի հավերժորեն ձգտել, կանչել ու ընդառաջ գնալ այդ երազին, հասնել ու ձուլվել: Բանաստեղծի համար սերը կյանքի հոմանիշն է.

Սերն հեթանոս Երջանկությունն է,
խաչված,
Սերն ա՛յն կուռքն է, որուն առջև
ծնրադրած
Որբի՛ մը պէս պիտի ողբար ի՛նքն
Աստված ...

«Արդեն ըսեր եմ քեզի, – մի նամակում գրում է Սևակը կնոջը՝ Յաննի Ապպելին, – որ սերն ինձ համար մեծ, լուրջ, հավիտենական բան է: Անիկա միակ զգացումն է, որ մեզ կը մոտեցնե աստվածներուն»: Սևակի խոհերի մեջ Սերը ամենագոր է, ինչպես կյանքը ու հզոր է կյանքի հակոտնյայի՝ մահվան պես: Կյանք և Մահ հավիտենական ողբերգական հակակշռի մեջ կյանքի կարճատևությանը հակադրվում է մահվան հավերժականությունը, և Սերը, որպես կյանքի հոմանիշ, երբեմն հիշատակվում է հենց սիրո հզորությունն ընդգծելու համար:

Մեռնիլ մեռնի՛ լ... Անմահանալ մահվան մեջ,
Մեռնիլ... Գրկիդ գոգն, այսպես, մեր սերն անշեջ
Անհունին մեջ ծառացնել տիրական...

Չմոռանանք ուսանող Սևակի և Յաննի Ապպելի դրամատիկ, բայց և երջանիկ պահերով լեցուն սիրո պատմությունը, որի վավերական վկայությունն են Սևակի՝ Ապպելին գրած նամակները: Սիրո բացառիկ մի պատմություն, որ ձգվում է առաջին

հանդիպումից մինչև ամուսնական կյանքի բոլոր տարիները, մինչև ողբերգական պարտադրյալ բաժանում: Դա փոխադարձորեն մեծ ու հզոր սեր էր: Կարճ ժամանակով իրենից հեռու գտնվող կնոջը Սևակը գրում է.

«Կը սիրեմ քեզ, գանձս, դուն միակն ես, որ ընդունակ է անկեղծորեն և հավերժորեն զիս սիրելու... Կը սիրեմ քեզ, հոգիս...

Կարոտագին կ'ըղձամ տեսնել աչքերդ, կ'ըղձամ նայվածքիդ մեջ կորսվիլ, կ'ըղձամ զգվել քեզ, ունենալ, տրվիլ քեզի, սարսռալ սերեն, ապրիլ և զգալ, որ կ'ապրիմ... Սիրելիս...»:



Այս կյանքում ի վերջո սերը վախճանական է, անհունի մեջ՝ հավերժական: Այս խոհր նոր չէր թե ռոմանտիկների ու թե հատկապես խորհրդապաշտների երգերում (Իսահակյան, Մեծարենց, Տերյան, Չարենց): Ամեն դեպքում ինչպես մյուսների, այնպես էլ Սևակի պոեզիայում նմանատիպ խոհերից բխող հետևությունը Կյանքի հաստատումն է՝ Սիրո փառաբանությունն ու մեծարումը:

Սևակի սիրո այդ պատմությունը հետագայում մղել է մի շարք գրողների՝ կերպավորել այդ սիրավեպը և ընդհանրապես Սևակի կերպարը վիպական կառույցի մեջ՝ Ս. Ծառուկյան՝ «Ռուբեն Սևակ՝ սերը եղևոնի մեջ», Հ. Հակոբջանյան՝ «Սպիտակ եղևվեյսներ», Ալ. Թովիցյան՝ «Եվ անգամ մահից հետո»):

Սևակի արձակ գործերը բազմաժանր են՝ պատմվածքներ, գրույցներ, խորհրդածություններ, հոդվածներ: «Բժիշկին գիրքեն փրցված էջեր» (1913 թ.) գրուցաշարում հեղինակը կենդանի ու վառ գույներով ներկայացրել է հասարակության բարոյական պատկերը, մարդու անձնական վիշտն ու հիվանդությունը, գրքում զետեղված են բժշկական գրույցներ, որոնք հետապնդում են առողջապահական, ուսուցողական նպատակներ: Դրանք պատմություններ են («Հարսերուն գաղտնիքը», «Փոխան հարսանիքի», «Մեղքին պտուղը», «Ահավոր տարակույսը», «Այլասերում», «Վեցերորդ զգայարանք»), որոնց ականատես է եղել հեղինակը՝ որպես բժիշկ աշխատելիս: Բժշկական պրակտիկայում ստացած տպավորություններով դրանց մեջ Սևակը պատմում է տարբեր հիվանդությունների մասին, զգուշացնում ընթերցողին՝ հեռու մնալ տարբեր բնույթի

ախտերից: Հեղինակը գրող է ու բժիշկ, պատմությունները մասնագիտորեն պատճառաբանված են, պատումը՝ գեղարվեստորեն տպավորիչ: Սևակի պոետական ձայնը լսելի էղավ արևմտահայ բանաստեղծության հզոր ձայների մեջ, ավելին՝ եղավ սիրելի, քանի որ նա ոչ միայն սրտացավորեն էր արձագանքում հայ կյանքի մղձավանջին, ոչ միայն, որ նա դիտում էր կյանքը բազմակողմ՝ քաղաքական, սոցիալական, հասարակական խնդիրներով, որ սիրող, խորհող ու տառապող մարդու տեսակն էր կերպավորում, այլև, հատկապես, որ այդ ձայնը սրտառու էր, հավատ ներշնչող, անկեղծ: Բանաստեղծական այդ ձայնը երբեմն բորբոքուն էր, բարձրատուն, բայց առավելապես՝ մեղմ քնարական, պարզ պատկերավոր, որ զգայականություն է հաղորդում, բազմաչափ և բազմաձև բանաստեղծություններով, և երաժշտական, ռիթմիկ, տպավորիչ հանգավորումով, կյանքով լեցուն ու կյանք ներշնչող: Ուսանողական տարիներին, օտարալեզու միջավայրում արևմտահայերենով ծնվում էին բանաստեղծություններ, որ ուղարկում էր հայ մամուլին, իսկ Պոլսում Սևակն արդեն ճանաչված բանաստեղծ էր: Այնտեղ նրան սպասում էին, ինքը սպասում էր վերադարձի օրվան:

Հայրենիքից եկած լուրերով էր ապրում, ուրախանում, տագնապում, զայրանում: 1909 թ. ապրիլին թերթերը գուժեցին Ադանայի կոտորածի լուրը: Հեռավոր Լոզանում «իր տեղը չգտնող» Ռուբենը Պոլսի «Ազդակին» հղեց իր հոգու խռովքը՝ նամակով. «Մն օրեր կապրինք նորեն, սարսափի օրեր: Հեռագիրները ամեն ժամ նոր գույժ մը կը բերեն: Ջարդ, ու եթե ջարդ չէ, հրդեհ, ու եթե հրդեհ չէ, սով, ու ինչ որ ամենեն սարսափելի էր՝ համաճարակ: Լրագիրները ամեն օր սուգի նոր գին մը կ'ավելցնեն»... Սևակը մեջբերումներ է անում շվեյցարական մամուլից, և բարձրաձայնում քաղաքական մի հանդեսում ասված միտքը Թուրքիայում կրկնվող ջարդերի մասին, «էքքբ այս ժողովուրդը պիտի սորվի մարդկորեն կատղիլ»:

«Ու իրավ: Մարդկորեն կատղիլ, այս տարրական առաքինությունը կը թվի իսպառ հեռացած ըլլալ հայու սրտեն...», – ցավով ավելացնում է Սևակը:

Կիլիկիո կոտորածների լուրերն օրեր շարունակ խռովում են բանաստեղծի հոգին՝ ծնունդ տալով ցավով, ցասումով, վրեժով ու ըմբոստությամբ լեցուն բանաստեղծությունների («Չանգակներ, զանգակներ...», «Ո՛վ իմ հայրենիքս», «Կիլիկյան երգեր» շարքը, որ 1909-10թթ. լույս են տեսնում պոլսահայ մամուլում): Դառնակսկիծ ցավի մորմոքով է նա դիմում իր հայրենիքին.

Ով դուն, ով դժբաղդ երկիր հայրենի,
Որ արյունի տաք շամանդաղի մեջ,
Ջոհ գազաններու խաղին վայրենի,
Ու համալանասպառ բոցերու անշեջ,
Կը մխաս, դժբաղդ երկիր հայրենի...

Իսկ նա ոչինչ չէր կարող անել, միայն կարող էր ճշալ ցավից, աղաղակել, հնչեցնել հոգու տագնապի զանգակները՝ ի լուր աշխարհի և խնդրել, պահանջել եկեղեցիների բարձր զմբեթներում թառած լուռ զանգակներից՝ «գույժ տվեք հայուն, զի ազգը

մեռավ», փափագում է կախվել զանգերի պարաններին ու «ցնցել երկաթ
բազուկներով»:

Հոգիիս հազար խուլ զանգակներով
Գոռացեր, զանգեր ու կատաղորեն
Գահավիժեցե՛ք ձեր երկաթ թառեն,
Ուրկե միայն լալ գիտցաք դսրերով.
Օ՛, Ղողանջեցե՛ք. Աստվածն է մեռեր...
Խնչն այլսս անգոր և, ապրելու համար
«տուր է հարկավոր»:

«Կիլիկյան երգերում», որպես «մութ շանթերու սերմնացան», բանաստեղծը վրեժի,
ըմբռստության երգ է սերմանում՝ հավատալով, թե իր ցանքում այդ տաղերը
«կը ծնին մահու առաքյալներ, հսկաներ», որի մեջ խոշտանգված հայ մայրն իր
արյունով է դիեցնում մանկանը և նրա օրորոցայինը երգ չէ, այլ պատգամ:

Հայրենասեր բանաստեղծի կերպարը, Սևակը կարողացել է տալ անգամ ընդամենը
վեց տող ունեցող «Հայաստան» բանաստեղծության մեջ: Հիրավի փոքրիկ մի
գլուխգործոց, երեք պատկեր և համակողմ ընդհանրացում.

Ո՞վ կուլա այսպես խշտյակիս շեմքին.
Քույր, դարիպն է, բաց:
Կմախք մը կ'անցնի դուրսեն լալագին.
Մովն է, դուռդ բաց:
Տապարն է ջախջախ դրանքս կուրծքին.
Ջարդն է, դուռդ բաց:

Ջարդ, սով և պանդխտություն: Իրարով պայմանավորված այս իրողությունները, որ
Վարուժանը հատկանշում էր «Ձոն»-ում, ամբողջացնում են իր օրերի Հայաստանի
պատկերը՝ ընդամենը վեց տողի մեջ: Այս բանաստեղծությունը, որպես էքսպրոնտ,
Սևակը գրել է Ավ. Իսահակյանի ծոցատետրում 1913 թ., հետագայում՝ 1918 թ.,
Իսահակյանն այն ուղարկել է Չոպանյանին և խնդրել տպագրել, որ չկորչի «այս
գեղեցիկ բանաստեղծությունը» (Ավ. Իսահակյան):

«Քառուր» խորագրի տակ ամենայն հավանականությամբ Սևակը հավաքելու էր իր
այն բանաստեղծությունները, որոնք ունեին սոցիալական բովանդակություն: Քառս
բառը մեզ ակամա հիշեցնում է Շիրվանզադեի վեպը: Հասարակական նոր
հարաբերությունները՝ սոցիալական ընդգծված անհավասարություն, փողի
մրցավազք, մարդկային հոգիների ձևախեղում, բարոյական անկում, ավանդական
բարքերի մոռացություն, իսկապես կյանքը դարձրել էր մի քառս, որից ազնիվ
հոգիները դուրս գալու էլք էին փնտրում: Բանաստեղծ Սևակի մտորումներն այս
ամենի շուրջ հաճախադեպ են («Աարդերգություն», «Փողոց ւսվողք», «Այս դանակը»,

«Թրուպատուրները», «Դրամին աղոթքը», «Կարմիր դրոշակը» և այլն): Կյանքում ստեղծված անհավասարությունը, անարդարությունը բանաստեղծին մղում են խոհերի, որ նաև էլք են փնտրում: Այդ խոհերի մեջ մշտապես առկա է թշվառների, հարստահարվողների, աշխատավոր դասի նկատմամբ բանաստեղծի սերը, միշտ անհաշտ, երբեմն ըմբոստ, երբեմն նույնիսկ հեղափոխական պայքարի համակիր կեցվածքը անարդարության նկատմամբ:

Մևակն ստեղծագործության նյութ դարձնելով մայր ժողովրդի արյունոտ ճակատագրի թեման, մոռացության չէր տալիս սոցիալական այն բարդ հարցերը, որոնք ընդհանրապես նրա ստեղծագործության առանցքն են կազմում.

Նա միայն պատմական թարմ իրադարձությունների լույսի տակ էր դիտում այդ հարցերը՝ միշտ աչքի առաջ ունենալով հայ ժողովրդին հասած արհավիրքի ամբողջ ողբերգականությունը: Պատահական չէ, որ «Կարմիր գիրք» ընդհանուր խորագրի տակ են գետեղված բնույթով տարբեր այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են մի կողմից «Ջարդի խենթը» և «Թրքուհին», մյուս կողմից «Մարդերգություն» պոեմները: Հեղինակն, անշուշտ, նկատի է ունեցել այդ գործերի բովանդակության ներքին ընդհանրությունները: Մևակի համոզմամբ հասարակության Ներքին կառուցվածքի աններդաշնակությունը չարիքի աղբյուր է եղել հայ ժողովրդի բազմադարյան պատմության բոլոր փուլերում: Դարեր շարունակ կույր հավատի և քրիստոնեական հեգոնության շղթաները կաշկանդել են ժողովրդի ակտիվ պայքարի ուժերը, իսկ դա միշտ էլ ձեռնառու է եղել հասարակության պորտաբույծ խավերին: Մևակն այս միտքը, այլաբանական պատկերների միջոցով, զարգացնում է «Հայ գատիկ» լեգենդում:

Լեգենդի հիմքում ընկած է Սրտավազդ արքայորդու մասին հայտնի ավանդությունը, որ հեղինակը մեկնաբանել է յուրովի. Արտավազդի շղթաները դարձել են դարավոր բռնության խորհրդանշան, իսկ ինքը՝ ժողովրդի բանտարկված հույսը: Հետևելով իր նախասիրած ձևին, Մևակը ժողովուրդ հավաքական հասկացությունը սիմվոլացրել է ավեհեր ծերունու կերպարի մեջ: Անհիշելի ժամանակներից ի վեր ծանր մուրճով հարվածել է նա սալին, հոգնել է, բայց «տոկացել է դարերուն»:
Ու «գեղջուկներ բարի, խեղճուկներ բոլոր» անհուն երկյուղածությամբ ունկնդրել են մուրճի ձայնին, որպես «ավետաբեր զանգի»: «Սարի անեծքն է», — եղել է նրանց միամիտ հավատը, և անմոռնչ տոկացել են հոգևոր բռնության: Լեգենդական արքայորդուն տրված «հայահեծ» մակդիրը խոր իմաստ ունի, կարծես ճակատագրի դառն հեզնանքով ժողովուրդն ինքն է դարերով ամրացնում կաշկանդված ազատության շղթաները...

Մևակն ստեղծում է կոտորածի ու մահվան, արյան ու մղձավանջի սարսեցնող պատկերներ, որոնք հուշում են իրական ճշմարտությունը: Հայ ժողովուրդը դիվանագիտական խաղերի զոհն էր այն պետությունների, որոնց շահերը խաչաձևվում էին հետամնաց ու բարբարոսական Թուրքիայում: Վերջինս ստանձնել էր դահճի դերը և,

օգտվելով քաղաքակիրթ կոչված աշխարհի անտարբերությունից, իր դարավոր հաշիվներն էր մաքրում անզեն ու անպաշտպան մի ժողովրդի հետ:

Դեռ 1908 թ. գրված «Կարմիր կարոտ» բանաստեղծությունը վկայում է, որ «հեռավոր գյուղի»՝ ծննդավայրի կարոտը տառապեցնում է նրան.

«Տարիներով կարոտն ունիմ սիրագին այդ հողերուն...», «Անոնց կարմիր կարոտն ունիմ ախտագին»...

Սևակն արևմտահայ գրականության պատմության մեջ առաջինն է գրել նամականու ժանրով. նամակները նրա ստեղծագործական ժառանգության մի մասն են: Նամակներ գրել է կնոջը՝ գերմանուհի Յաննիին, որոնք հայ գրականության սիրային նամակագրության լավագույն նմուշներից են, ինչպես նաև ընկերներին ու ծնողներին: Նշանավոր են նաև Սևակի սոնետները: Նա գրել է ոչ միայն սովորական, այլև «պոչավոր» սոնետներ, որտեղ, ինչպես Մեծարենցի մոտ, վերջին 15-րդ տողը առաջինի կրկնությունն է նույնությամբ («Հոգիս», «Միրո մրմունջը») կամ փոքրիկ փոփոխություններով («Այդ գիշեր», «Ծեր բորենին»): Սևակի «Չհասկցվածները» շարքը կազմված է հինգ սոնետներից («Վերջին արքան», «Պիտի մեռնի...», «Իժը», «Չղջիկը», «Հայրը»), որոնք բոլորն էլ գրված են 14 վանկանի տողերով: Այդ չափով է գրված Ռուբեն Սևակի սոնետների գերակշիռ մասը. սրանք ավելի երկարաշունչ տողեր են, որոնք թույլ են տալիս զուտ քնարական ապրումը զուգակցել պատումային ինչ-ինչ տարրերի հետ.

Անոնք գացին խարհուրդով ու գաղտնիքով բեռնավոր,
Գացին նավերը սիրույս իմ աչքերուս առջևեն,
Ցըռուկնին վեր, դեպի մութ եգերքները հեռավոր,
Առագաստները գինով, մայրամուտի գաղջ հովեն:

Ռուբեն Սևակը նաև թարգմանել է օտարազգի բանաստեղծների (Ալբեր Մամեն, Ա. Բրյուն) մի շարք սոնետներ: Մի հետաքրքիր դիտարկում. Սևակը, որքան էլ զարմանալի է, սոնետներում չի կիրառել այնքան ընդունված օղակաձև հանգավորումը. նա առավել նախընտրում էր կից կամ խաչաձև հանգավորում հիմնականում պահպանելով քառատողերում երկու հանգի առկայությունը, իսկ եռատողերը հանգավորված են ամենատարբեր եղանակներով: «Ապրիլը հաղթել է», «Կոունկը», «Ահավոր տարակույսը», «Հարսերուն գաղտնիքը» ստեղծագործությունները հեղինակի կյանքից վերցված նկարագրություններ են և պատկերված են գեղարվեստական մեծ վարպետությամբ: Մի բանաստեղծությունում Ռուբեն Սևակը տալիս է, ասես, իր պոեզիայի խտացված պատկերը, բնություն, սեր, իդեալ, երագ, և կոտորած: Ճերմակ կարապ և մարդկային արյուն.

Ո՛վ իմ հայրենիքը՝ ս...Ու դու՛ք հեռավո՛ր,
Եփրատ ու Արաքս ու Վանա ծովակ,
Ո՞ր են կարապները սիրախտավոր

Որ իրենց երա՛զ թներով ճերմակ
Ճեղքեին կարմիր ձեր կու՛րծքն ախտավոր.

Ռուբեն Սևակը նպատակ է ունեցել հրատարակել «Միրո գիրքը», «Քառսը», «Վերջին հայերը» խորագրերով ժողովածուներ, սակայն ողբերգական մահն անկատար է թողել նրա մտահղացումները:

Ռուբեն Սևակի ստեղծագործություններն աշխարհայացքով, գեղարվեստական մտածողությամբ ու ոճով ինքնուրույն տեղ են գրավում XX դ. սկզբի արևմտահայ գրականության մեջ: Նրա պոեզիային բնորոշ են լեզվի մաքրությունն ու հարստությունը, արվեստի բազմազանությունը, երաժշտականությունը:

Նրա արձակ գործերը, ժանրային իմաստով, բազմազան են:

Իր ստեղծագործական կյանքի կարճատև տարիներին Սևակը խնամքով հավաքում էր մամուլում ցրված իր բանաստեղծությունները, մասնագիտության մեջ խորանալու և աշխատանքային սևեռումի քիչ ազատ ժամերին գրում էր նոր բանաստեղծություններ ու արձակ էջեր, որ մասամբ էր միայն լույս աշխարհ հանում, բայց նոր գրքերի աշխարհ գալուն խանգարում էին պատասխանատվության զգացումը և ժամանակը: Հայտնի է, որ նա ծրագրել էր հրատարակել նոր գրքեր, ու խորհում էր դրանց նյութի ու կառույցի մասին:

Սևակը մեկն էր իր օրերի այն բանաստեղծներից, ովքեր իրենց գրքերը կազմում էին ամբողջական շարքերով (հիշենք Ստոմ Յարճանյանի, Վահան Տերյանի, Դանիել Վարուժանի, Եղիշե Զտոռենցի շարք-գրքերը):

Կարոտից ու իր ժողովրդի հետ լինելու գիտակից մղումից դրդված՝ Ռուբեն Սևակը 1914 թ. ընտանիքով մեկնում է Պոլիս: Իր մասնագիտությամբ աշխատանք է գտնում և գրողների, մտավորականների հարազատ միջավայրում իրեն հրաշալի է զգում:

Պատերազմի տարիներին որպես զինվորական բժիշկ՝ սպայի աստիճանով ծառայում է թուրքական բանակում, բայց դա էլ չի խանգարում, որ ապրիլի 24-ին ձերբակալված ու արստրված հայ մտավորականների շարքում լինի նաև նա: Շատերի հետ նա էլ արստրվեց Չանղըրը:

Ռուբեն Սևակը իր շատ նշանավոր ժամանակակիցներից ավելի շուտ զգաց ու նկատեց արևմտահայությանը սպառնացող ողբերգության հեռանկարը: Սևակը իրեն¹ դրսևորեց որպես հասուն ազգային ու քաղաքական գործիչ և իր ստեղծագործություններով զգոնության կոչ էր անում, ընդգծելով համազգային միասնության կարևորությունը:

1909 թ. գարնանը, երբ Ադանա քաղաքում երիտթուրքական իշխանությունների կազմակերպած արյունահեղությանը զոհ դարձավ 30 հազար հայ, Ռուբեն Սևակը եղավ այն ազգային գործիչներից մեկը, որը երիտթուրքական հեղափոխությունից «զինովցածներին» Արշակ Չոպանյանի, Անդրանիկ Օզանյանի, Փարամազի և մյուսների նման զգուշացնում էր ահագնացող վտանգի մասին: Եվ այդ զգուշացումը Ռուբեն Սևակը ոչ միայն արտահայտում էր իր բանաստեղծությունների մեջ, ինչպես

օրինակ «Գիւղական եկեղեցիին մէջ», «Գիւղական գերեզմանին մէջ», «Վրէժին սերմնացանը», «Վերջին օրօր», «Վերջին հայերը» ստեղծագործություններում, այլև նամակներում ու հրապարակախոսական ելույթներում:

Մեջբերում 1908 թ. օգոստոսի 8-ին Ռուբեն Սևակի հրապարակային ելույթից.

«Ամբողջ Եվրոպայի մէջ աշխարհի են շքեղ կեդրոններէն մինչև ամենամութ ու խաւարին անկիւնները եւ չեմ տեսեր ու չեմ ալ կրնար հաւատալ, որ գտնուի տակաւին ՄԷՎ ՌԻՐԻՇ ԱԶԳ, որ ամէն օր ու ամէն վայրկեան ապրէր դերասանի ճշմարտապէս կեղծ ու գերեզմանօրէն ծիծաղելի այն կեանքը, որ դարերէ ի վեր մեր կեանքը եղաւ, մեր ստրկացած թրքահայերու կեանքը...

Տառապիլ ու ստիպուած ըլլալ ամենաերջանիկ կերպարանք մը ցոյց տալու...

անպատուուիլ, բռնաբարուիլ, գետնաբարշ տապալիլ ու ստիպուած ըլլալ գոհութեան ջերմագին աղաղակներ բարձրացնելու... Ժպտիլ այնպիսի մէկ վայրկեանիդ, որ արին արցունք պիտի պոռտկար աչերեդ, մաղթանքի ճիչեր հանել կոկորդէդ այն բռնակալ ձեռքին համար, որ զքեզ կը խեղդէ, մեռնիլ ու հոգեպէս մեռնիլ ու ապրիլ ձևացնել, ահա դերասանական ահռելիօրէն կեղծ կեանքը, որ մերը եղաւ այնքան երկար տարիներ: Արդ ինչպէ՞ս կուզեք որ այսպիսի պայմաններու մէջ ժառանգօրէն ու բնածինօրէն մեր ամենաանկեղծ յատկութիւնը մեր կեղծելը չ'ըլլար ու մեր բնական յարմարութիւնը՝ դերասանութիւնը» :

Այնուհետև Ռուբեն Սևակը զգուշացնում էր. «Ներսի գաւառներու մէջ կոտորածի վախ կայ, կը լսէ՞ք ԿՈՏՈՂԱՕԻ ՎԱԽԸ» ու պահանջում էր «մարդկօրէն կատողիլ», այսինքն՝ զինված ազատագրական պայքար մղել:

1915 թ. թուրքական յաթաղանի գոհ դարձած Ռուբեն Սևակը ոչ միայն խոսքով ու գրչով պաշտպանեց իր գաղափարները, այլև կյանքի գնով ապացուցեց ժողովրդին անմնացորդ նվիրվածությունը, ինչպէս Դանիել Վարուժանը, Միամանթոն և ուրիշներ:

1915 թ. ապրիլի 11-ին, լինելով զինվորական ծառայության մէջ, Ռուբեն Սևակը ձերբակալվում և բանտարկվում է Կ. Պոլսի կենտրոնական բանտում, ապա արտարվում Չանդըրը: Անունը փոքագրվել է Չանդըրըի բանտում հավաքված համրիչի 99 հատիկներից մեկի վրա: Չանդըրըում բուժել է թուրք ավազակապետ Արաբաջի Իսմայի աղջկան: Իսմայիլը նրան հորդորել էր իր աղջկա հետ ամուսնանալ ու իսլամություն ընդունելով փրկվել սպառնացող վտանգից, սակայն բժիշկը հրաժարվել է այդ խորհրդին հետևելուց: Ռուբեն Սևակը հավատարիմ է մնացել իր ընտանիքին, իր զավակներին: Նա հավատարիմ է մնացել իր ժողովրդին և գերադասեց մահը կյանքը ստորաբար շարունակելու ողորմելի հեռանկարից...

Չանդըրըի չերքեզ փոխկառավարիչը, որ նրա բարեկամն էր, անգոր պատասխանել է, «Ես չեմ կրնար Պոլսէն եկած հրաման մը չգործադրել»:

Ռուբենին ազատելու համար Գերմանիայի արտգործ նախարարությանը, Կ. Պոլսի և

Մոֆիայի նրա դեսպաններին, Լոզանի հյուպատոսին, Կ. Պոլսում դեսպան Հանսֆոն Վանգենհայմին բազմաթիվ դիմումներ են ուղարկել նրա աները՝ գերմանական բանակի պահեստի սպա Ֆրանց Ապելն ու կինը՝ Հելեն Ապել-Չիլինկարյանը: Բոլորն էլ՝ ապարդյուն: 1915 թ. օգոստոսի 12-ին հեռագրել է կնոջը, թե Դանիել Վարուժանի հետ գտնվում է Այաշի բանտում:

Նշվում է նաև որ, 1915թ. ապրիլի 24-ին, Ռուբեն Սևակը գնում է հերթական դասախոսության: Դասախոսությունն ավարտելուց հետո Սևակը դուրս է գալիս շենքից, որոշում մինչև նավամատույցը ոտքով գնալ: Փոքրիկ շոգենավով անցնում է Բոսֆորի մյուս ափը, ապա ոտքով գնում մինչև Բանկալտիի Նալբանտ փողոցում գտնվող Մավրոբուլո մենատուն, որտեղ բնակվում էին ինքն ու Յաննին՝ իրենց երկու փոքրիկների հետ: Թալեաթի և Էնվերի մարդիկ սպասում էին Մավրոբուլո մենատան առաջ, Ռուբեն Սևակը ձերբակալվում և ուղարկվում է Չանդրը:

Մերուժան Պարսամյանը վկայում է. «Առաջին վայրկյանն իսկ հուսահատ էր տիկին Չիլինկարյան: Առտուկ գերման դեսպանատուն, իրիկունը՝ ոստիկանական տնօրենի մոտ... իբրև հայուհի մը ըլլար տիկին Չիլինկարյան, կը քննադատեր գերմաններուն ընթացքը, կը պախարակեր անոնց վայրագությունը»:

Աքսորյալներին թույլատրվում էր ժամանակ առ ժամանակ ազատ շրջել դրսում, զբաղվել իրենց մասնագիտությամբ, բայց չբացակայել Չանդրից: Չանդրի զորանոցում Կոմիտասը երգչախումբ կազմեց, սակայն խումբը հետըզհետե նվազում էր: Տանում էին երկու-երեք հոգու՝ ռազմական դատարանում դատելու պատրվակով: Հերթը հասավ Դանիել Վարուժանին, Ռուբեն Սևակին և էլի երեք հոգու: Գիշերը անով էր լցված: Ընկերները չքնեցին:

Դանիել- Մեր վերջին ազատ գիշերն է, Ռուբեն... Թերևս քեզի ալ կթվի, թե այսօր մանավանդ պիտի հասկնաս՝ ինչու ես ապրած և ինչու ես տառապած...

Ռուբեն - Ինձ համար գրելը երգել էր: Բոլոր մխիթարությունս երկաթե փոքրիկ գրչիս մեջն էր: Ու մենավոր ապաստանիս մեջ, ձմրան գիշերներ, ինձմե երջափիկ մարդ չէր կարելի երևակայել՝ ոտանավորի մը ավարտումեն վերջ:

Դանիել - Քերականը ես սորվեցա մորս սիրելի ծունկերուն վրա... Հետո հասկցա, որ մայր ըլլալ, կամ բանաստեղծ՝ նույն բանն է... Բաղձանքս էր ապագայի մարդերուն նվիրել այնպիսի հգոր երգ մը, որ Հայրենիքը ինձի պես արարած մը ծնած ըլլալուն գոնե չզղջա... Արդյոք սերունդները ի՞նչ պիտի մտածեն մեր մասին... Պիտի ուզե՞ն մեզ կարդալ:

Ռուբեն - Չպիտի կարդան, թող չկարդան... Բայց գոնե թող հիշեն, որ իրենցմե առաջ եղած են երկու հայ տղաներ՝ Դանիել և Ռուբեն, որոնք կսիրեին հետնորդները: Կսիրեին առանց ճանչնալու... Խենթի պես, մեծ ու անսահման սիրով... Իսկ հետնորդներ պիտի ըլլա՞ն...

Դանիել - Ինչ է հիմար հարցեր կուտաս: Անոնցմե շատերը պիտի կոչվին Ռուբեն և
Դանիել... Ոչ ի պատիվ մեզ, ոչ... Այլ պարզ այն պատճառով, որ պիտի ըլլան հայ:

Ռուբեն - Իսկ մեր տառապանքներն ու ու ցավերը որևէ օգուտ պիտի տա՞ն անոնց,
գոնե՞ քար մը պիտի հանեն և անոնց ճամփեն... Եթե հանեն, մենք ալ կապ՝րինք անոնց
մեջ... Բոլորին հետ միասին... եթե պոռամ կը լսեն անոնք, Դանիել:

Դանիել - Ես իմ անդորրը քաղեցի այն հավատքեն, որ ունիմ հայու ապագային վրա:
Պիտի մեռնիմ՝ Հայաստանի պատկերը բիբերուս մեջ...

Ռուբեն - Լավ ըսիր. «Հայաստանի պատկերը բիբերուս մեջ»: Բայց ես անչափ
կփափաքիմ, Դանիել, որ մեր հետնորդները հիշեն մեզ: Հիշեն Դանիել Վարուժան և
Ռուբեն Սևակ գրողներուն, հայերուն, խավար գիշերներու արևերգուններուն:
Կրփափաքիմ, որ կարդան ու ըմբռնեն խոսքերս. ... Ինչ փույթ, թե մահըս է քայլ մը
ասդին, ես սրահար եմ մարմանդին...

1915 թ. օգոստոսի 26-ին, Չանդըրը և Կալեջիկ գյուղերի միջև, Չանդըրըից կառքով 6
ժամ հեռու գտնվող Թյունե կոչված վայրում, Վարուժանին, Սևակին, ևս երեք հայ
արտոյալի կառքով, իբրև թե տեղափոխում են Այաշ, բայց ճանապարհին, նույն օրը,
նախապես մշակված ծրագրով նրանց վրա են հարձակվում հինգ զինված
ավազակներ, իջեցնում են կառքից: Նրանք դիմադրել չէին կարող, նրանց ձեռքերը
կապված էին: Ուղեկցող ոստիկանները, թալանելով նրանց ունեցվածքը, հեռանում են,
իսկ ավազակները՝ զազանաբար մորթոտում են նրանց: Կառապանը, որ ականատես
էր, հետագայում մանրամասնորեն նկարագրել է այդ ամենը: Ըստ Գոնիայի
պատերազմական աստյանում կառապան Հասանի տված վկայության՝ բժիշկը եղել է
վերջին սպանվողը: Ասում են՝ իբրև թե մեկ օր հետո Պոլսից հեռագիր է ստացվել, թե
Վարուժանն ու Սևակը պիտի ազատվեն: Իբրև թե: Կրկին խաբեություն: Կարող էր, չէ՞,
պատահել, որ Ռուբեն Սևակը չգար Եվրոպայից կամ վերադարձը ձգվեր ընդամենը
մեկ տարով, կամ թեկուզ, ոչ համոզմունքով ընդուներ իսլամը: Իր կամքն էր: Այդպես
ընտրեց ինքը՝ կանգնել դեմ-հանդիման բարբարոսներին և մնալ բախտակիցների
կողքին: Յուրայինների կողքին, որպես նրանց բժիշկը: Բժիշկը ոչ միայն մարմինների,
այլև հոգիների՝ որպես բանաստեղծ: Բժշկությունը մասնագլխություն է, սովորում ևս
ու բուժում: Բանաստեղծությունը չէս սովորում, այն կենարար խոսք է, որ ծնվում է
ինքնաբույս, որպես հոգու երգ, փոխանցելու համար ուրիշ հոգիների, մարդկայնորեն
ապրելու գաղտնիքը բացելու նրանց համար: 1915 թ. հոկտեմբերին Ռուբեն Սևակի
կինը երեխաների հետ տեղափոխվել է Լոզան՝ հոր մոտ: 1920 թ. ընտանիքով
տեղափոխվել են Փարիզ:

Ռուբեն Սևակի գործերը մատենաշարի ձևով հրատարակել է եղբորորդին՝
Հովհաննես Զիլինկիյանը, որ աջակցել է նաև նրա մասին բազմաթիվ հոդվածների ու

գրքերի հրատարակմանը: Նա հիմնել է Ռուբեն Սևակի անվան մրցանակ, որին արժանացել են տասնյակ հեղինակներ, այդ թվում՝ հայկապահայ բժիշկ-գրող Թորոս Թորանյանը՝ «Իմ Ռուբեն Սևակը» գրքի համար: Հ. Չիլինկիրյանը Ֆրանսիայի Նիցցա քաղաքում հիմնել է Ռ. Սևակի տուն-թանգարան, որտեղ 1985 թ. մեծ շուքով նշվել է բանաստեղծի ծննդյան 100-ամյակը:

1995 թ. Ռուբեն Սևակի անունով է կոչվել Երևանի թիվ 151 դպրոցը, որտեղ գործում է Ռուբեն Սևակի թանգարան-սրահ, իսկ բակում տեղադրված է նրա կիսանդրին, որի բացման պատիվը ընձեռվել է դատերը՝ Շամիրամին: Նույն դպրոցում 2007 թ.

նոյեմբերին կայացել է հայկապահայ բժիշկ-գրող Թորոս Թորանյանի «Իմ Ռուբեն Սևակը» գրքի շնորհանդեսը, որին մասնակցել է նաև 93-ամյա Շամիրամ Չիլինկիրյան-Սևակը:



2007 թվականին հրատարակել է Ռուբեն Սևակի բանաստեղծությունների «Հատընտիրը» հայերեն ու ֆրանսերեն՝ Անահիտ Օհանյանի թարգմանությամբ: Այնտեղ ընթերցողի ուշադրությանն է հանձնվել Սևակի այն գործերը, որոնք բանաստեղծի ընտրությամբ տպագրվել էին 1910 թ. լույս տեսած նրա «Կարմիր գրքում»: «Հատընտիրը» տպագրվել է Հովհաննես Չիլինկիրյանի հովանավորությամբ: 2013 թ. սեպտեմբերի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ 18-րդ դարում կառուցված Ղազարապատ կոչված պատմական շենքում բացվել է Ռուբեն Սևակի անվան թանգարանը:

Ռուբեն Սևակ ինքնատիպ ոճի եւ խոսքի տեր տաղանդավոր մտավորականը ունեցավ գործունեության կարճ շրջան, բայց թողեց մեծարժեք գրական ժառանգություն: Իր կարճատեւ կյանքի երեսուն և իր գրական կյանքի ութ տարիներին Սևակը հայ գրականության մեջ նվաճեց ծանրակշիռ տեղ: